



Տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում Հաճախորդի ապահովագրված ավտոմեքենան բախվել է ճանապարհից բարձր գտնվող դիտահորին, ինչի հետևանքով ավտոմեքենան վնասվել է: Ընկերությունը, սակայն, հրաժարվել է փոխհատուցել Հաճախորդի կրած վնասը:

Քաջատեղյակ լինելով Հաշտարարի գործունեությանը՝ Հաճախորդը դիմել է վերջինիս՝ խնդրելով վերականգնել իր խախտված իրավունքները և Ընկերությունից պահանջել փոխհատուցել կրած վնասը:

Ընկերության կողմից Հաշտարարին ուղղված դիրքորոշումից պարզ է դարձել, որ ըստ Ընկերության մշակած կանոնների՝ ապահովագրական պատահարներն են. 1) ճանապարհատրանսպորտային պատահարը կամ վթարը (բախում, վրաերթ, շրջում կամ բարձրությունից անկում), 2) հրդեհը կամ ինքնաբռնկումը, 3) տարերային աղետը կամ անդիմադրելի ուժի ներգործությունը, 4) ավտոտրանսպորտային միջոցի գողությունը, 5) քարերի թափվելը, որևէ առարկայի հետ բախվելը, որևէ առարկայի վայր ընկնելու կամ այլ դժբախտ պատահարները: Ընկերությունն իր գրությամբ նշել է, որ կնքած պայմանագրով ճանապարհային անհարթության հետևանքով պատճառված վնասի ռիսկը Ընկերությունը չի ստանձնել, ուստի և պատճառված վնասը փոխհատուցման ենթակա չէ:

Ուսումնասիրելով համապատասխան օրենսդրական ակտերը և գործում առկա փաստերը՝ Հաշտարարը Ընկերության ուշադրությունն է հրավիրել հետևյալ փաստի վրա՝ որպեսզի դեպքը դիտարկվի որպես ապահովագրական պատահար, անհրաժեշտ է՝

1. տրանսպորտային միջոցի շարժում (առկա է տվյալ դեպքում),
2. տրանսպորտային միջոցի մասնակցություն (առկա է տվյալ դեպքում),
3. պատճառած նյութական վնաս (առկա է տվյալ դեպքում):

Վերոնշյալ նկատառումները հաշվի առնելով՝ Ընկերությունը համաձայնել է փոխհատուցել Հաճախորդի կրած վնասը:

Փաստորեն Հաշտարարի միջնորդությամբ հնարավոր եղավ կողմերի միջև առաջացած վեճը լուծել հաշտությամբ: